սիրեցեալ հովիւը, հովիւը կունենայ իսկական նշանակութեամբ «իւր» հարազատ հօտը, որի մէջ նա պատահական չինովնիկ չի լինի, այլ կը լինի համայնքի վստահելի ղեկավար։ Այն ժամանակ կըվերջանային կամ, յամենայն դէպս, կը կրճատուէին մինչև minimum հոգևորականների տեղից տեղ փոփոխութիւնները։...»

—Ինչ որ այժմ է նախագծւում պրաւոսլաւ եկեղեցում, այն, բարեբաղդաբար, շատ վաղուց գոյութիւն ունի հայերիս մէջ։

Օրթոդոքս եկեղեցին արտասահմանում

Церк. Вѣст.-ում (№ 5) կարդում ենք.

Անգլիական դեսպանի այցելութիւնը Կ. Պոլսոյ յոյն պատրիարքին։

Յունվարի 19-ին Տիեզերական պատրիարք Յովակիմին այցելեց անգլիական դեսպանը և մի ժամից աւելի խօսակցեց Նորին Սրբութեան հետ զանազան խնդիրների առիթով։ Անգլիական դեսպանը մեծ հետաքրքրութեամբ հարցնում էր պատրիարքին եկեղեցական գործերի մասին և ստանում էր ամենամանրամասն և ստոյգ տեղեկութիւններ։ Աւարտելով խօսակցութիւնը դեսպանը շնորհակալ է եղել պատրիարքից և, ինչպես խօրին յարգանաց առ Նորին Սրբութեան անձնաւորութիւնը, համբուրել է Նրա աջը։ Դեսպանին ընդունեցին և ճանապարհ դրին մեծ պատուով։ Արևելքում հզօր և ազդեցիկ Անգլիայի ներկայացուցչի այցելութիւնը Կ. Պոլսոյ եկեղեցական գործիչների վերայ մեծ ազդեցութիւն գործեց, իսկ յոյն մամուլը այդ բանի մէջ նկատում է լաւ նշան պատրիարքարանի քաղաքականութեան մէջ՝ Թիւրքիայի քրիստոնեաների համար այժմեան անբարեյաջող ժամանակում, երբ հարկ է պաշտպանել ամենաթանկագին ժառանգութիւնը—ուղղափառ հաւատքը, եկեղեցին և դպրոցը սահմանադրական կառավարութեան ոտնձգութիւնների դէմ։

Յոյն—Բոլգարական հերձուածի առիթով.

Վոլինի արքեպիսկոպոս Անտոնին մի թուղթ էր ուղղել յոյն պատրիարք Յովակիմին. այս թուղթը անցեալ յունվարի 18-ին կարդացուել է յոյն Սրբազան Սինոդում. Ռուս արքեպիսկոպոսը իւր թղթում ցանկացել է յոյների և բոլգարների միջև եկեղեցական հաշտութիւն. Սինոդը որոշել է պատասխանել Անտոնի արքեպիսկոպոսին ըստ այսմ. Քրիստոսի մեծ եկեղեցին, յիրաւի, ցանկանում է ոչնչացնել բոլգարական հերձուածը, երբ բարեյաջող վայրկեանը կընպաստի այդ գործին, բայց ի հարկէ, առանց սուրբ կանոնները զեղծանելու.

Մեսական նոր օրէնք յունական թագաւորութեան մէջ.

Յունվարի սկզբին հրատարակուեց արքայական հրաման յունական պետութեան եկեղեցու մէջ ծխական նոր օրէնք հաստատելով. Համեմատութեամբ հին ծրագրի՝ նոր օրէնքի մէջ արուած են մի քանի էական փոփոխութիւններ, որոնք նախապէս մատնանշուած էին Աթէնքի միտրոպոլիտ Թէոկղիտիոսի առաջնորդութեամբ Սրբազան Սինոդում.

Եկեղեցական գանձարանի նախահաշիւը.

Անցեալ դեկտեմբերի 30-ին ներկայացուել է եկեղեցական գործերի նախարարին Յունաստանի եկեղեցական ընդհանուր գանձարանի 1911 թուի նախահաշիւը. Այս նախահաշիւով գանձարանի մուտքը հաշուած է 1,071,000 դրախմ կամ ֆրանկ, իսկ ծախքը 288,030 դրախմ. Ըստ այսմ մնացորդը լինում է 782,970 դրախմ, որ պէտք է ծախսուի Յունաստանի ներքին եկեղեցական վարչութեան կարիքների և ի մասնաւորի, շատերից դուրս և զառամեալ հոգևորականների, նրանց այրիների և որբերի կենսաթոշակների և եկեղեցական դպրոցներ շինելու վերայ։